

ՈՒՌՀԱՅԵՑՈՒ ԵՐԿՈՒՄ ՀԱՆԳԻՊՈՂ «ՄԱՐԳԷ» ԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ԲԱՐՔԻՅԱՆ

«Գրիգոր Մագիստրոս, որդի Հոլում Վասակի, Պահլավունյաց տոհմից, կոչվում էր նաև Գրիգոր-Մարցեն Պահլավունի կամ Բջնեցի»:

Այսպես է գրում Գրիգոր Մագիստրոսի մասին ակադեմիկոս Հրաչյա Աճառյանն իր «Անձնանունների բառարանում»<sup>1</sup>, կարծես եզրափակելով մինչ այդ արտահայտված բազմաթիվ և մեկը մյուսից տարօրինակ կարծիքները այդ առեղծվածային «Մարցէ» անվան կամ ածականի մասին: Պետք է ասել, սակայն, որ Հ. Աճառյանն իր Բառարանի համապատասխան հատորում չի արձանագրել «Մարցեն» անունը, գուցե ենթադրելով, որ անվան մասին չէ խոսքը, այլ ածականի:

Մարցէ «անվան» միակ հիշատակությունը հանդիպում է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն» մեջ: Եկարագրելով հայոց Գագիկ Բ վերջին թագավորի դահ բարձրանալը, նա գրում է. «Յայնժամ զարթուցեալ մանուկ մի ութ և տասն ամաց՝ Գագիկ անուն, ի նոյն շառաւիղէն Բագրատունեաց, որդի Աշոտոյ արքային, որդւոյ Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ՝ որդւոյ Աբասայ՝ որդւոյ Սմբատայ՝ որդւոյ Երկաթայ: Եւ մանուկս այս Գագիկ էր յոյժ իմաստուն և երկիրզած և աստուածասէր. և ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն սրբոյ և հրամանաւ մեծի իշխանին, որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն, որ էր ազգաւ հայկազնեան և հայրենեօք Պահլաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի, և էր յազգէն սրբոյն Գրիգորի»<sup>2</sup>:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» Գագիկի գահ բարձրանալու առթիվ ասված է. «Եւ ժողովեցան իշխանքն Հայոց, հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ, և գնացեալ առ սուրբ հայրապետն տէր Պետրոս՝ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ տանն Հայոց»<sup>3</sup>:

Հայագետներին շատ է զբաղեցրել այդ անսովոր «Մարցէ»<sup>4</sup> «անունը» կամ

1 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 549:

2 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 86—87:

3 «Սմբատայ Սպարապետի Տարեգրք», Վենետիկ, 1956, էջ 36—37:

4 Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրությունը բովանդակող Մաշտոցի անվ. Մատենադարանի բոլոր գրչագրերում անխտիր գրված է «մեծն Մարցէն» (կամ Մարցեն): Տե՛ս հետևյալ գրչագրերը. № 1731, էջ 123ա, № 1767, էջ 67բ, № 1768, էջ 212բ, № 1769, էջ 217ա, № 1896, էջ 27բ, № 2644, էջ 29բ, № 2855, էջ 107ա, № 2899, էջ 36ա, № 3071, էջ 175ա, № 3380, էջ 44ա, № 3519, էջ 22բ, № 3520, էջ 118ա, № 6605, էջ 32ա, № 8159, էջ 250բ, № 8232, էջ 80ա:

ածականը, նրա մասին արտահայտվել են տարբեր և մեկը մյուսից տարօրինակ կարծիքներ: Հայագետները համերաշխ են այն հարցում միայն, որ «Մարցէ»-ն համարում են աղավաղում կամ վրիպակ: Առաջինը, որ կասկածով մոտեցավ այդ «անվան», էդ. Դյուլորիեն էր, որն Ուռհայեցու ժամանակագրության իր ֆրանսերեն թարգմանության մեջ պարզապես անտեսեց այն, թեև թարգմանեց նրան վերագրված «սրբակեաց» և «մեծ» ածականները (*grand et saint*), որոնք վերագրեց նախապես հիշված Պետրոս կաթողիկոսին<sup>5</sup>:

Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» բնագրի առաջին հրատարակիչները այդ առթիվ գրել են. «Անունս Մարցէն եթէ չիցէ վրիպակ, է նա ինքն Գրիգոր մագիստրոս Պահլաունին՝ եղբորորդի Վահրամայ սպարապետի ծերունւոյ»<sup>6</sup>: Դժվար չէ նկատել, որ հրատարակիչները աշխատել են որոշել «Մարցէ»-ի ո՞վ լինելը և ոչ թե ի՞նչ լինելը:

Գրիգոր Մագիստրոսի թղթերի հրատարակիչ և նրա կենսագրության մանրամասն հետազոտող Կ. Կոստանյանցը խնդրո առարկա հարցի կապակցությամբ գրել է. «Թվի թե պատմիչը շփոթում է Մագիստրոսին Վահրամի հետ: Առհասարակ Ուռհայեցու պատմածը գրչի շփոթություն է երևում. «Եւ ժողովեցան ամենայն նախարարն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն սրբոյ և հրամանաւ մեծի իշխանին». այս ամենն, — շարունակում է Կ. Կոստանյանցը, — հասկանալի է, իսկ շարունակությունն, անշուշտ, շփոթություն է. «շնորհօք ս. Հոգւոյն» Գագիկին օծել կարող էր միայն կաթողիկոսն Տ. Պետրոս, որին և վերաբերում է «մեծն Մարցէն» հորշորջումը. մինչդեռ Ուռհ. ժամանակագրության կրկին տպագրությունների մեջ էլ այնպես է, իբրև թե Գագիկին օծեց մեծ իշխանի հրամանով մեծն Մարցեն, որ իբր թե նույն Գրիգոր Պահլավունի մեր հեղինակն է: Գուցե մեծն Մարցեն, — վերջացնում է Կ. Կոստանյանցը, — վերաբերեր Վահրամին, քանի որ նախաձեռնողը նա էր»<sup>7</sup>:

Մաղաքիա Օրմանյանը, կանգ առնելով տվյալ հարցի վրա, գրում է. «Օծումին կատարումը եղած կ'ըսուի հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ (ՄՄԲ. 67), զոր ուրիշ մը սրբակեացն մեծն Մարցէն կը կոչէ (ՈՒՌ. 101), որ եթէ պարզապէս գրչագրական սխալանք մը չէ, Մագիստէր կամ Մաստեր կոչման տարադէպ աղաւաղութիւն մըն է»<sup>8</sup>:

Ուսումնասիրողներից Կ. Ն. Յուզբաշյանը չի կասկածում տվյալ բառերի արժանահավատությանը, Մատթեոս Ուռհայեցու գրչին պատկանելուն և, հակադրվելով Կ. Կոստանյանցին, գրում է. «Ինձ թվում է, որ բավարար հիմքեր չկան կասկածելու Մատթեոս Ուռհայեցուց մեջբերված հատվածի արժանահավատությանը»<sup>9</sup>: Նա քննարկվող նախադասությունը թարգմա-

<sup>5</sup> «Chronique de Matthieu d'Edesse (962—1136) avec la continuation de Grégoire le Prêtre jusqu'en 1162». Paris, 1858, էջ 70:

<sup>6</sup> «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ», Երուսաղեմ, 1869, էջ 555:

<sup>7</sup> «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1912, էջ 14, ծանոթ. 2:

<sup>8</sup> Մ. Օրմանյան, Աղգապատում, հատ. Ա, սյունակ 1224:

<sup>9</sup> К. Н. Юзбашян, Экскурсия в армянской надписи 1051 г. «Палестинский Сборник», вып. 23 (86), Ленинград, 1971, էջ 106:

նել է այսպես. «И собрались все нахарары Армении при патриархе владыке Петросе и помазали Гагика царем над всей страной армянской благодатью святого духа и повелением великого ишхана (повинуясь которому и помазал его [т. е. Гагика,—К. Ю.] пребывающий в святости великий Марцэн), а был он из рода hАйка (Հայկազեան) и по происхождению (հայրենեօք) Դաիլавуни. Имя ему дано согласно предку его Григорию, и был он из рода святого Григория»<sup>10</sup>.

Եթե ելնենք այս թարգմանությունից, ապա ստացվում է, որ великий ишхан-ը (Գրիգոր Մազիստրոսը) և великий Марцэн-ը տարբեր անձնավորություններ են. «повелением великого ишхана (повинуясь которому и помазал его [т. е. Гагика]... великий Марцэн»: Բայց Կ. Յուզբաշյանի բացատրություններից պարզ է դառնում, որ «Մեծն Մարցեն» հնադանդվելով Պետրոս կաթողիկոսին (և ոչ մեծ իշխանին) Գագիկին թագավոր օծեց, այսինքն նա Գրիգոր Մազիստրոսին ու Մարցեին նույնացնում է, սակայն «Մարցե»-ի մասին որևէ բացատրություն չի տալիս:

Դժվար չէ նկատել, որ վերոնշյալ բացատրություններից և ոչ մեկը համոզիչ և ընդունելի համարել հնարավոր չէ: Կասկած չի կարող լինել, որ «որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն» բառերը հետագա շրջանի ընդմիջարկություն են: Այդ բանը հաստատվում է նաև Սմբատ Սպարապետի Տարեգրքի տվյալների հիման վրա, որը, ինչպես վերևում տեսանք, գրեթե բառացի բերում է Ուռհայեցու նախադասությունը՝ Գագիկի թագավոր դառնալու մանրամասնությունների վերաբերյալ, բայց և ոչ մի խոսք չի ասում սրբակյաց «մեծն Մարցէի» մասին:

Հարցը կարող է լուծվել միայն «Մարցէ»-ի ճիշտ մեկնությամբ: Պարզ է, որ այդպիսի անուն կամ հորջորջում հայերի մոտ գոյություն չունի: Այն չի կարող նաև մագիստեր կամ մաստեր բառը լինել, որովհետև այդ բառերը նախ համահնչուն չեն «Մարցէ»-ի հետ, բացի այդ, հայ մատենագրության մեջ մագիստրոսը միշտ կոչվել է մագիստրոս և ամենևին ոչ մագիստեր կամ մաստեր: Վերոհիշյալ ուսումնասիրողները ճիշտ են այն բանում, որ «Մարցէն» բառի մեջ ենթադրում են գրչական սխալ: Եվ իսկապես, այնտեղ թույլ է տրված հայկական գրչագրերի համար սովորական երկու սխալ. «Մարցէն» բառի մեջ «Ա»-ն պիտի սրբագրել «Ս», իսկ «է»-ն «ի»: Այսպիսով ստանում ենք «Մարցին»:

Ո՞վ էր սրբակյաց Մարցին, այն էլ մեծ Մարցին: Անկասկած Վահրամ Բ Վկայասեր կաթողիկոսը, Գրիգոր Մազիստրոսի որդին: Նրա մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայսմ թուականութեանս նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայաստան ազգին ամենագովելին Տէր Գրիգորիս, որ հոմանուն Վահրամ, որդի Գրիգորի Մազիստրոսի, որդի Վասակայ Բջնեցիք և ազգաւ Պահլաւունիք: Տէր Գրիգորիս նստաւ յաթոռ հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահնշահի՝ որդւոյ Աբասայ Կարսուոյ»<sup>11</sup>:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>11</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 155:

Ուռհայեցին շարունակում է իր խոսքը Տեր Գրիգորիսի մասին. «Զստեսին արժանաւոր սուրբ աթոռոյն, զի էր յոյժ առաւելեալ հռչակաւոր անուամբ, լցեալ սրբութեամբ և արդարութեամբ, և տիրեալ ամենապայծառ առաքինութեամբ»<sup>12</sup>:

Դժվար չէ տեսնել, որ Տեր Գրիգորիսի մասին ասված «լցեալ սրբութեամբ» բառերը արձագանքում են մեծ Մարցու մասին ասված «սրբակեացն» բառին: Բացառված չէ, որ այստեղ ընդմիջարկութեան հեղինակը նկատի ունի Գրիգորիսին վերագրվող ժուժկալությունը, որի մասին Ուռհայեցին գրել է. «Սա ըստ օրինի աշխարհիս կին արարեալ (var. առեալ) էր և սրբութեամբ և անարատութեամբ պահեալ էր զինքն»<sup>13</sup>:

Ինչո՞ւ Տեր Գրիգորիսը պիտի կոչվեր Մարցի<sup>14</sup>: Այդ հարցին պատասխան տալը դժվար չէ: «Եւ էր ի թուականութեանս Հայոց ՇԻԳ (1074 թ.), — գրում է Ուռհայեցին, — և ապա զկնի այսօրիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ. և եկեալ յեգիպտոս... և հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեանն»<sup>15</sup>: Նույն հեղինակը մի այլ տեղում գրում է. «Ի ժամանակիս այսմիկ ի շորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ (Տեր Գրիգորիս — Հ. Բ.) յեգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին. և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, և Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնագրութիւնս և օժանէին եպիսկոպոստոնս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն»<sup>16</sup>:

Մատթեոս Ուռհայեցին, հասկանալի է, նաև միջնադարյան հայ և այլ հեղինակներ, որպես Եգիպտոսի հոմանիշ օգտագործում է Մար: Ուռհայեցին մեկ նախադասութեան մեջ օգտագործում է այդ նույնիմաստ տեղանունները. «Սա (Ախսիսը — Հ. Բ.) յաղթեաց Մարայ. և ծեծեալ զթագաւորն եգիպտոսի զԱզիզն»<sup>17</sup>:

Պարզ է, որ վերոհիշյալ կաթողիկոսներից յուրաքանչյուրը պիտի կոչվեր այն երկրի կամ քաղաքի անունով, որտեղ որ նա աթոռակալում էր. Թեոդորոսը՝ Հոնեցի, Բարսեղը՝ Անեցի<sup>18</sup>, Պողոսը՝ Մարաշցի, իսկ Գրիգորիսը, հասկանալի է, Մարցի:

Այս բոլորից բացի իր բացատրութեանն է գտնում նաև ինդրո առարկա ընդմիջարկութեան մեջ հանդիպող «մեծն» բառը նույնպես: Հարցն այն է, որ Գրիգոր Վկայասերի բեռորդին և հաջորդը Եգիպտոսում (Մարում) նույնպես կոչվել է Գրիգոր Վկայասեր, և որպեսզի այդ երկուսին իրար հետ շփոթեն, Գրիգոր Մագիստրոսի որդի Գրիգոր-Վահրամ Վկայասերին կոչել են «Մեծ»,

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 155:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>14</sup> Գրիգոր Ակներցին Եգիպտոսի թագավորին հիշում է «Մարցի» անվամբ. «շուն և անիրաւ Մարցին»: Տե՛ս «Մաղաքիայ արեղայի Պատմութիւն վասն ազգին նւտողաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 35:

<sup>15</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 211:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 229—230:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>18</sup> Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատմ, հատ. Ա, սյունակ 1335 և հտ., 1390:

իսկ վերջինիս քեռորդուն՝ «Փոքր» Վկայասեր<sup>19</sup>: Ընդմիջարկության հեղինակը «մեծ Մարցի» ասելով ուզեցել է ընթերցողի համար պարզ դարձնել, թե ում նկատի ունի:

Արդ, ի՞նչ պատճառով հետագա շրջանի գրիչը Գագիկ Բ-ի թագավոր օծվելու առթիվ ավելացրել է՝ «որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցին»: Պետք է ասել, որ այս նախադասության միտքը այդքան էլ հստակ չէ: Նախ, «որով»-ի փոխարեն, ըստ երևույթին, պիտի լինի «որ»: «Ջնա» դերանունն էլ, հավանաբար, չենք կարող Գագիկ Բ-ին վերագրել այն պարզ պատճառով, որ նրան թագավոր էր օծել Պետրոս Գետադարձը, այդ մասին ասված է Ուսճայեցու վերոհիշյալ նախադասության մեջ, և ընդմիջարկության հեղինակը հազիվ թե Գագիկի օծումը վերագրեր նաև Վկայասերին, քանի որ վերջինս կաթողիկոս դարձավ 1066-ից ոչ առաջ: Եթե ընդմիջարկության մեջ մեկ տառ ավելացնենք («որ և օծեաց զնա՝ զսրբակեացն մեծն Մարցին») այդ դեպքում կստացվի, որ Գագիկ Բ-ը, հետագայում՝ իհարկե, կաթողիկոս օծեց (ասել է՝ օծել տվեց) Գրիգոր Վկայասերին, ինչ որ համապատասխանում է իրականությանը: Հայտնի է, որ Վահրամիս կաթողիկոս ընտրելու գործում զխավոր դերը խաղացին հայոց երկու Գագիկ թագավորները՝ Գագիկ Բ-ը և Գագիկ Աբասյանը: «Հայոց խափանուած կաթողիկոսութեան աթոռը,— գրում է Ղ. Ալիշանը,— իրեն ընծայուեցաւ ջանիւք և աղաչանօք վտարանդի թագաւորաց: Հայոց (երկուց Գագկաց) և թագուհեաց, և բոլոր եկեղեցւոյ ուխտին»<sup>20</sup>:

## ОБ ИМЕНИ «МАРЦЭ» В «ХРОНОГРАФИИ» МАТФЕЯ ЭДЕССКОГО

Р. М. БАРТИКЯН

(Резюме)

Описывая воцарение последнего ширакского Багратида Гагика II, Матфей Эдесский пишет, что его помазали царем повелением великого князя Григория Пахлавунни, под которым подразумевается Григорий Магистр. Однако в том же месте «Хронографии» говорится также, что «помазал его пребывающий в святости великий Марцэ». Большинство исследователей слово «Марцэ» считает именем и относит его либо к Григорию Магистру, либо к помазавшему Гагика католику Петросу, однако исходя из того, что подобного имени или слова у армян и в ар-

<sup>19</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 348, ծան. 1: Հմմտ. էջ 352, ծանոթ. 8, էջ 378, ծան. 3, էջ 510, ծան. 3: Նաև՝ Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, սյունակ 1390:

<sup>20</sup> Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 28: Հմմտ. «Ազգապատում», հատ. Ա, սյուն. 1273: Ուսճայեցին, ինչպես վերևում տեսանք, գրում է. «Տիր Գրիգորիս նստաւ յաթոս հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահնշահի: Երգ. և: Աբասայ Կարսցւոյ» (էջ 155): Նա մի այլ տեղում գրում է, որ այդ գործն իրականացրին նրանք. «որք մնացեալ էին ի թագաւորացն և յիշխանացն Հայոց» (էջ 154): Գագիկ Աբասյանը երբեք «Շահնշահ» չի կոչվել (տե՛ս «Ազգապատում», հատ. Ա, սյուն. 1288), այդ մակդիրը տրվել է Գագիկ Բ-ին: Հավանաբար նախադասության մեջ արտագրողների մեղքով կրճատվել է երկրորդ Գագիկ անունը, այն պիտի վերականգնել. «Հրամանաւ Գագկայ շահնշահի (և Գագկայ) որդւոյ Աբասայ Կարսցւոյ»:

мянском языке не существует, они усматривают здесь какое-то искажение.

Можно полагать, что данное предложение (которое можно перевести и «помазал его, пребывающего в святости великого Марцэ») является интерполяцией: Марцэ — ՄԱՐՑԷ нужно исправить в ՄԱՐՑԻ (Мсрци), т. е. «Мсирский» (Египетский), под которым подразумевается основавший в Египте (Мсире) армянскую патриархию католикос Вахрам II. Он был помазан католикосом повелением Гагика II.